

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2004թ. հունվարի 12-14-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Ժնևում կայացած 2004 թ. Եվրոպայի բնակչության համաժողովին,
- ✓ 2004թ. հունվարի 21-23-ը ՀՀ ՎՊԽ անդամ Հ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Ջ. Մազուչանցը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Գ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Ստոկհոլմում կայացած «Ժամանակի օգտագործում» հետազոտության հարցերով հանդիպմանը,
- ✓ 2004թ. փետրվարի 8-ից մինչև 2005թ. հունվարի 8-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվության հավաքագրման ժողովրդագրության ոլորտի մուտքագրող օպերատոր Գ.Իզնատոսյանը մասնակցում է ք.Կահիրեում ընթացող «Ընդհանուր ժողովրդագրություն» թեմայով դասընթացին,
- ✓ 2004 թ. փետրվարի 16-ից մինչև մարտի 25-ը ՀՀ ԱՎԾ նախագահի օգնական Ա. Աղազարյանը մասնակցում է ք. Տաշքենտում կայացող «Շուկայական տնտեսություն» թեմայով դասընթացին: